15. ԾԻ ՏՂԵՆ

Կէղի, չէղի ախչիկ մե, պապ մե, մամ մե։ Պապ գելի լուսուն կէրթա խրոշի բերա, թունդիր վառե։ Կէրթա կտեսնա օր հանդե ծին մե կապուկ, յոթ կանթեն բառոշ դրուկ հ'առեճ, բառոշի մեջ մեկ կող փիլավ, մեկ կող լէ լավաշ լցուկ, դրուկ։

Կէրթա ուշիկ կվերցու լավաշ, փլավ գըլնա՝ մըջ լավաշին, կգրա ուր ծոց, զուր խրոշ կշալկա, գիգա ուր տուն։

Լուսուն մեկ լէ գելնա կէրթա էն տեխ՝ ծիու մոտ. կէրթա էլման զուր խրոշ կժողվա գըլնա ուր շալակ, գիգա էլման էրկու լավաշ կփռե, փլավ գըլնա վրեն, կշալկե զուր խրոշ ու գիգա ուր տուն։

Կնիկ կըսե.— Մարդ, դու զէդ ի՞նչ տեխեն կբերիս։

Կըսե.— Էն ֆլան սարի գլոխն է։

Կըսե.— Մարդ, էրթանք առնինք ծին ու գանք։

Գելին կնիկ, մարդ ու ախչիկ կէրթան սարի գլոխ, ծին կառին գիգան, կկապին տուն։

Կէրթան հ'մեն օր ծիու հ'առեճի բառոշից փլավ գըլնան կբերին, կուտին։

Էն մեկ օր ախչիկ գիգա տուն, կեսա. —Մարե, ես խաց կուզիմ, անոթի իմ։

Կեսա.— Դե գնա ծիու հ'առեճեն փլավ ու լավաշ բեր կեր։ Ամեն օր պըտի իգաս խաց իսնե՞ ուզիս։

Ախչիկ կէրթա կառնե կուտե։ Ծին գելնի զրուցք, կեսա.

— Ախչիկ, արի առ ընձիկ. օր չառնիս ընձիկ, ես կէրթամ, քու խեր լէ, մեր լէ անոթի կմեռնիք։

Ախչիկ գիգա տուն, կեսա.— Մարե, իդա ծին կեսա. «Արի առ ընձիկ»։

Պապն ու մամ լէ կեսին.— Մենք գիտանք, հ'որի՞ չիտանք. գիտանք, օր չէրթա, մենք մեռնինք անոթնե։

Գելնան կբերին զծին ու ախչիկ կփսակին։ Կփսակին, իրկուն օր թր պրտի պառկին, ծին կխանա զուր շապիկ ու կէղնի խորոտիկ խորտ մի, կկանի էդ տեխ։

Ախչիկ կեսա.— Դու հ'որի՞ իգա շապիկ կխաքիս, օր դու էդմլա խորոտիկ մարդմ իս։

Կեսա.— Իմ խալավ լէ էդ ա օր ես կխաքիմ։

Լուսուն ախչիկ գելի դիգա մոր խեչ, կեսա.— Մարե, հրմալ խորոտիկ խորտ մե օր դու գաս թամաշա էնիս։ — Կեսա,— մարե, իմա՞լ էնիմ օր ընդրա շապիկ կորցում։

Կեսա.— Տար դիր բուխերիկ, թ'իրիցի։

Ախչիկ կէրթա, կպառկին. իրիկուն օր կէղնի, ծին օր գիգա զուր շապիկ կհանե, ախչիկ կդողնա զշապիկ, կդնե բուխերիկ, կիրիցի։

Տղեն լուսուն գելի կօլորտի ուր շապկին, կեսա. «Իմ շապիկ դո՞ր է». կօլորտի, չգտնա, կեսա.

— Ըպա, ախչիկ, իմ շապիկ իմա՞լ էղեր է։

Կեսա.— Վոյ՜, քու շապիկ դրեր իմ բուխերիկ, իրիցեր իմ։

Տղեն գելնա կէրթա դարբնի դուքան կսուքե շուխտ մի սոլ, ճոկան մե էրկթե, կբերե գիտա ուր կնիկ-ախչիկ։

Կեսա.— Ախչիկ, առ իգա սոլեր, խաքի, ճոկան լէ առ քու ծեռ։ — Ախչիկ օր կառի ուր ծեռ, տղեն կեսա.— Դու օր իմ շապիկ իրիցեցիր, իդա ճոկան կոտրի, իդա սոլեր լէ կտրտի, նոր ընձի կտեսնաս։ — Կեսա ու կխամբարձի, կկորի։

Իդա հախս փիլավ բան կխլսի, ընդրանք անոթութենե կմեռնին, մամ լէ ախչկան կեսա.

— Առ իդա սև փոստ, տար հ'առուն լվա, սիվտկցու առ արի։

Ախչիկ կտանե կթփե, չթփե, լվա չլվա չսիվտկի, սև փոստ իսկի կիստկի՞, կսիվտկի՞։ Իդա հախս կտեսի օր հանդե տղե մի էն դեհեն գիգա, կեսա.

— Ախչիկ, զին իրիցող սավդալու ծուռ, էդ ինչ՞ ա կէնիս։

Կեսա.— Շամու Իխթիար, խոդուտ ու արևուդ մեռնիմ, իմ մամ ըսեր է տար իդա սև փոստ սիվտկցու։

Մարդ գիներ թը ըդ ախչիկ ուր կնիկն էր, ախչիկ չգիներ օր ուր մարդն էր։

Իդա հախս մարդ կթքու վրեն՝ կսիվտկի, կառի գիգա։ Կրեերի տուն. մամ լուսուն կեսա.

— Տար իդա սիվտակ փոստ, սևցու[1] բեր։

Գելնա կառի ղփոստ, կէրթա հ՚առուն, կթփե, կթփե ու չթփե, լվա ու չլվա՝ չսևնա։

Կտեսի օր էդ տղեն էն գեհեն էլման էկավ։ Գիգա կեսա.

— Ախչիկ, զին իրիցող սավդալու ծուռ, էդ ի՞նչ ա կէնիս։

Մարդ գինա ուր կնիկն է, կնիկ չգինա օր ուր մարդն է։

Մարդ կթքու վրը սիվտակ փոստին, կսևնա, կառնի գիգա։

Լուսուն մամ կեսա.— Դե, ելի խաքի քու սոլեր, առ քու ճոկան քու ծեռ, քու տոպրակ առ ու գնա, գնա բմբուլ (փեստուր) բեր, բըմբուլե բերթ կսուքինք, Շամու Իխթիարի խարսնիք կէնինք։

Ախչիկ լուսուն կառի զուր ճոկան, զուր սոլեր կխաքի, կառի զուր տոպրակ, կէրթա։ Կէրթա սար ու չոլ, գիլա ու կօլորտի։ Կտեսնի օր տղեն էն գեհեն գիգա, կեսա.

— Ախչիկ, զին իրիցուկ սավդալու ծուռ, ի՞նչ կօլորտիս էդ տեխրանք։

Կեսա.— Իմ մամ դրեր ա իմ վրեն, կեսա. «Գնա բմբուլ բեր բմբլե բերթ սուքինք, Շամու Իխթիարի խարսնիք էնինք»։

Կեսա.— Գնա, իդա առտի մեջ կանի, դու իմա՞լ պտի կանիս. իդա առտի մեջ, մեկ մեկ բմբուլ ժողվիս օր բմբլե բերթ սուքիս։

Կեսա.— Իմ մամն ա դրե կեսա բեր, ես իմա՞լ էնիմ։

Կեսա։— Դե գնա ճանգ մի խող վերցու թալ էն ծառի տակ, էնիկ կէղի ցորեն, խավքեր գիգան, կուտին։ Գիգան կուտին, ուրանց բմբըլներ կթափին կէրթան։ Կթափին կէրթան, կժողվիս գըլնաս քու տոպրակ, կշալկիս գիգաս։

Ախչիկ կէրթա, կառի ճանգ մի խող, կթալա, կէղնի ցորեն, խավքեր գիգան կուտին, ուրանց բմբըլներ կթափին ու կէրթան, կժողվե գըլնա ուր տոպրակ ու գիգա։ Գիգա ուր մամու մոտ։

Մամ կեսա.— Կտեսնիս էն անվերի սարի վրեն ծուխ մի հանդե գելնա, գնա էն տեխրանք օլորտի։

Ախչիկ գելնի կէրթա ըդ անվերի սարի գլուխ, գիլա ու կօլորտի։

Տղեն էն գեհեն գիգա, կեսա.— Ախչիկ, զին իրիցող սավդալու ծուռ, էդ ի՞նչ ա էդտեխ կօլորտիս։

---

1 Բնագրում սիվտակցու (Ս. Կ.)։

Կեսա.— Իմ մամ ընձի ըսեց. «Գնա էն անվերի սար օր թը ծուխ գելնա»։

Կեսա.— Քու մամ քըզի ի՞նչ կճամխի։

Կեսա.— Չգինամ։

Կեսա.— Կէրթաս, էնտեխ գելմ ու գառ կապուկ իրարու մոտ. օր գացիր, գելու հ՝առեճ խոտն ա գրուկ, գառի հ՝առեճ միսն ա գըրուկ. վերցու էն խոտ դիր գառու հ՝առեճ, միս լէ դիր գիլու հ՝առեճ. էրկու դուռ ա, բաց դուռ դիր, դրուկ դուռ բաց։ Կէրթաս կտեսնիս պառավ մի հանդե հ՝ոնի է. էնիկ կեսա. «Ո՞ւյ, մեռնիմ իմ ախչկա դլխուն, արևուն». օր հմալ ըսեց ու դնաց, էնիկ կէրթա ուր ակռեք սրե օր իգա քըզի ուտե։ Հըման դու շուտ մի պատեն կախուկ տոպրակ քաշե կտրե, բաց դուռ դիր, դրուկ դուռ բաց ու արի։ Օր էկար չէղնի թը տոպրկի բերան բանաս, օր բանաս՝ դելնին կթափին քու վըրեն, քզի կխեխթին։

Ախչիկ գնաց էն անվերի սարի գլոխ, տեսավ օր հանդե գիլու հ՝առեճ խոտ էր դրուկ, գառու հ՝առեճ միս էր դրուկ. կվերցու էն միս կդնե գիլու հ՝առեճ, խոտ կդնե գառու հ՝առեճ, կէրթա դուռմ մե դրուկ է, մեկ բաց. էն դրուկ դուռ կբանա, բացուկ դուռ կդնա։ Կէրթա տուն կտեսի օր հանդե պառավ մի նստուկ ա, կեսա. «Վա՞յ քու հոգուն, արևուն մեռնիմ, էդի դու հ՝ուստե՞ էկար օդի,— կեսա,— դե նստի, նստի». կնստցու, կէրթա զուր ակռեք կսրե օր իգա զախչիկ ուտե։ Էդի օր կէրթա զակռեք սրե, ախչիկ տոպրակ կկըտրե ու կփախնի։ Էն դրուկ դուռ կբանա, բացուկ դուռ կդնա ու կփախնի։

Գիգա ճամբախ տոպրակի բերան կրանա։ Դզեզի պես դելնին կթափին վրեն, կդղան, կղղան, ախչիկ գիլա, գիլա, կշիվարի, կկանի էդտեխ։ Կտեսնա օր տղեն հանդե էկավ, ըսեց.

— Զին իրիցող սավդալու ծուռ, չէ՞, ես ասի մի բանա ընդրա բերան։ Կվերցու տոպրակ կփչա, բերան կկապե, գիտա ախչիկ։ Ախչիկ կառի, գիգա կբերի ուր մամու մոտ։

Ժուք ու ժամանակ մի կմնան։ Ախչիկ գելի կէրթա ճրու, սոլեր կտրտի, ճոկան կոտրեր ա, կէրթա ախպրի վրեն տղին ռաստ գիգա։ Տղեն կառնե զախչիկ, կթալե շալակ, կէրթա։ Ախչկա մամ լէ գընդնա ախչկա ետև ու տղին օր զախչիկ ու տղեն բռնե ու բերե։

Տղեն կեսա.— Ախչիկ, աչքե սանք քու մամ էկա՞վ։

Կեսա.— Վոլա՞, իմ մամ էկավ, հանդե խասի մըզիկ։

Կեսա.— Ես կէղիմ ճուր, դու էղի գորտ։

Տղեն կեղի ճուր, ախչիկ լէ՝ գորտ. մամ գիգա կկղի օր ճուր

խմե, իդա ախչիկ օր դորա էր, գիգա մամու հ՝առեճ, կբղդորե մամու ճուր։

Կեսա.— Ք.... քու տիրու պապուն, չթորկեց օր ճուր խմենք։

Իդա հախս մամ գելնա, կէրթա։

Տղեն էլման գելնա կշալկե զախչիկն ու կէրթա, կեսա.

— Ախչիկ, ախչիկ աչքե սանք քու մամ էկա՞վ խասավ մրզիկ։

Կեսա.— Վոլա՜, ոխտ ա, համա խասի մրզիկ։

— Դե,— կեսա,— դու էղի բոստան, ես էղիմ բոստընջի։

Ախչիկ կէղի բոստան, տղեն կէղի բոստանջին։ Կտեսնա ընդրամամ էկավ։ Բոստընջուն կեսա.

— Դու տղեմ ու ախչիկ չը՞ս տեսե։

Կեսա.— Ին՞չ կեսիս, դըռ իմ ձմերուկ նոր է կոճկե։

Կեսա.— Մեռնիմ քու աչքերուն, տղեմ ու ախչիկ մե չտեսե՞ր իս։

Կեսա.— Դըռ իմ խիար նոր է կոճկե։

Կեսա.— Կուրբան էղիմ քըզի, տղե մի, ախչիկ մե շալկած չտեսե՞ր իս։

Կեսա.— Վոլա՜, իմ խռեն նոր է կոճկեր է։

Մամ կեսա. «էղի ծուռ է», կթորկե կէրթա։

Տղեն գելնա կառի զախչիկն ու կէրթա։ Կառնի կէրթա, կեսա.

— Ախչիկ, աչքե սանք քու մամ էկավ խասա՞վ մրզիկ։

Կեսա.— Վոլա, ոխտ ա, խասի մրզիկ։

Կեսա.— Դե գու էղի կոնի, ես էղիմ օձ (փայտ)։

Ախչիկ կէղնի կոնի փուշ, տղեն կէղնի օձ մե, կփաթվի բոլոր։

Մամ կէրթա կեսա.— Մեռնիմ քու խոգուն, քու արևուն, հորի՞ դու էղար օձ, փաթվար էդտեխ,— կեսա,— քանդվի էդտեխեն, քանդվի էդտեխեն։

Օր կեսա՝ քանդվի, օձ կզարգե քիթ ու բերան, մամ կպատի էդտեխ։

Իդա հախս տղեն կառնի զախչիկն ու կէրթա։

Կէրթա տուն, իդա հախս կփսակվին, կխասնին ուրանց մուրազին։